Հավելված №1

Սահմանված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2020 թվականի օգոստոսի 19-ի № 274Ա որոշմամբ

Կ Ա Ր Գ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆՈՐ ՍՊԱՌՈՂԻ ԿԱՄ ՍՊԱՌՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վերաբերյալ տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ընթացակարգը:
2. Տեղեկատվությունը ներկայացվում է եռամսյակային և տարեկան կարգով: 1-3-րդ եռամսյակների տեղեկատվությունը ներկայացվում է մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, իսկ 4-րդ եռամսյակի և տարեկան տեղեկատվությունը՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը:
3. Ընկերությունը Տեղեկատվությունը ուղեկցող գրությամբ Հանձնաժողով է ներկայացնում առձեռն, փոստային կամ էլեկտրոնային եղանակով:
4. Առձեռն կամ փոստային եղանակով ներկայացման դեպքում Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացվում նաև invest.report@psrc.am էլեկտրոնային հասցեին՝ սույն կարգի 6-րդ կետում նշված ֆորմատներով:
5. Էլեկտրոնային եղանակով Տեղեկատվությունը ներկայացվում է փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգի (Mulberry) կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային

կայքի առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով Տեղեկատվությունը ներկայացվում է Հանձնաժողովի սահմանած կարգով:

6. Փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) Տեղեկատվությունը ներկայացվում է XLS (իքսէլէս), XLSX (էքսէլէսիքս) կամ ODS (օդիէս) ֆորմատների ֆայլերի տեսքով, հայկական unicode (յունիկոդ) տառատեսակով, իսկ այլ տվյալներ ներկայացնելու համար կիրառելի են DOC (դոկ), DOCX (դոկիքս) կամ PDF (փիդիէֆ) ֆորմատները:
7. Առձեռն եղանակով ներկայացման դեպքում Տեղեկատվության ներկայացման օր է համարվում Հանձնաժողովում Տեղեկատվության և ուղեկցող գրության փաստացի մուտքագրման օրը, փոստային եղանակով ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպում նշված օրը, փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը, իսկ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման դեպքում՝ այդ համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով հաշվետվություններ ներկայացրած անձին հաշվետվությունների ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցման մեջ նշված օրը:
8. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվությունում սահմանված ձևերին անհամապատասխանությունների, անճշտությունների կամ բացթողումների առկայության դեպքում Ընկերությունը Հանձնաժողովի կողմից տեղեկացվում է այդ մասին և տեղեկացվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն կամ Տեղեկատվությանն առնչվող լրացուցիչ պարզաբանումներ:
9. Տեղեկատվության կազմման համար անհրաժեշտ սկզբնական հաշվառման փաստաթղթերում անորոշությունների, անճշտությունների և այլ վիճահարույց տվյալների առկայության, կամ տարբեր պատճառներով այդ փաստաթղթերի վավերացված չլինելու դեպքում Ընկերությունը սկզբնական հաշվառման առկա փաստաթղթերի կամ իր կողմից առավել արժանահավատ համարվող ցուցանիշների

հիման վրա լրացնում և Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում Տեղեկատվությունը ներկայացնում է Հանձնաժողով, իսկ հետագայում նոր հիմնավոր փաստերի առկայության կամ սկզբնական հաշվառման փաստաթղթերում փոփոխությունների կատարման դեպքում Տեղեկատվությունում կատարում է փոփոխություններ և Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն:

10. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվությունում Ընկերության կողմից սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում ևս վերջինս կարող է ներկայացնել ճշգրտված Տեղեկատվություն: Սույն կարգի կիրառության իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված մեկից ավելի Տեղեկատվությունից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված, իսկ մյուսները՝ ճշգրտված: